

Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի Կոշի միջնակարգ դպրոցի

(ուսումնական հաստատության անվանումը)

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության նշանակման» կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն, ՀՀ Արագածոտնի մարզի Կոշի միջնակարգ դպրոցի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը
- 2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)

2. Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

- 1) Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
- 2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
- 3) Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի պատճենը)
- 4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակով
- 5) Ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Կոշի միջնակարգ դպրոցում 2021 թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9⁰⁰-ից մինչև 15⁰⁰-ը, բացի հանգստյան (շաբաթ և կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. հոկտեմբերի 28-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ Արագածոտնի մարզի «Կոշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Կոշ, 13 փողոց, շ.12:

Տեղեկությունների համար դիմել՝ Է. Հակոբյան հեռ. 093601348, 093332641 էլ. հասցե՝ school_kosh@mail.ru